ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ ԹՈՐԳՈՄԻ

ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր **Սրբուհի Ռաֆիկի Գևորգյան**

Պաշտոնական ընդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր **Վազգեն Հենրիկի Մարգարյան**
հոգեբանական գիտությունների թեկնածու **Հրաչյա Ռաֆայելի Հովհաննիսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2016թ. ապրիլի 26-ին, ժամը 13.00-ին, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի հոգեբանության և փիլիսոփայության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. մարտի 25-ին:

Հոգեբանության և փիլիսոփայության
064 մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝ հոգեբանական
գիտությունների դոկտոր **Կ.Ե. Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից դպրոցը գտնվում է վերակառուցման փուլում. մշտապես տեղի են ունենում ուսուցման բովանդակության, ուսումնական գործունեության կազմակերպման բարեփոխումներ, որոնք մի շարք պրոբլեմային իրավիճակների առջև են կանգնեցում թե՛ ուսուցիչներին, և թե՛ աշակերտներին, ինչի արդյունքում տուժում է ուսումնական գործունեությունը: Միաժամանակ փոխվում է աշակերտների ներընտանեկան, համադասարանցիների, ինչպես նաև ուսուցիչների հետ միջանձնային փոխհարաբերությունների բնույթը: Այս ամենն օրինաչափորեն ազդում է աշակերտների սովորելու ցանկության՝ դրդապատճառների բարդ համակցության վրա:

Հիմնախնդրի ուսումնասիրության հրատապությունը թելադրված է նաև դպրոցում աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում առաջացող տարբեր դժվարությունների հաղթահարման, կանխարգելման և սովորողների միջանձնային հարաբերությունները ուսումնական գործընթացին ի նպաստ օգտագործելու, այն որպես սովորելու ձգտման, ուսումնական մոտիվացիան խթանելու միջոց դարձնելու անհրաժեշտությամբ:

Այսպիսով, **հիմնախնդրի կարևորությունն ու հրատապությունը** պայմանավորված են ուսումնական ներդաշնակ մոտիվացիայի ու միջանձնային արդյունավետ փոխազդեցության, միջին դպրոցում հոգեբանական ուղեկցության դերի կարևորության և համապատասխան հիմնարար ու կիրառական հետազոտությունների սակավությամբ:

Ատենախոսական աշխատանքը հնարավորություն կտա.

ա) բարելավել միջին դպրոցի աշակերտների հոգեբանական աջակցության գործընթացը,

բ) բարձրացնել կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման հոգեբանական ապահովման միջոցառումների արդյունավետությունը,

գ) ընդլայնել և խորացնել հիմնախնդրի շուրջ առկա հայեցակարգային մոտեցումների շրջանակը:

Հետազոտության նպատակն է բացահայտել միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի հարաբերակցության դինամիկայի սոցիալ-հոգեբանական գործոնները:

Հետազոտության նպատակին համապատասխան առաջադրվել են հետևյալ ***խնդիրները***.

1) վերլուծել «ուսումնական մոտիվացիա» և «միջանձնային հարաբերություններ» հասկացությունների վերաբերյալ գիտական մեկնաբանություններն, առանձնացնել հիմնախնդրի ուսումնասիրության տեսամեթոդաբանական հիմքերը,

2) ներկայացնել միջին դպրոցի աշակերտների ուսումնական մոտիվացիայի և միջանձնային հարաբերությունների հոգեբանական բնութագրերը:

3) բացահայտել և բնութագրել միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների և ուսումնաճանաչողական ու սոցիալական մոտիվացիայի համահարաբերակցական կապերի դինամիկան,

4) ուսումնասիրել միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի հարաբերակցությունը՝ համապատասխան պրոբլեմային իրավիճակների և անհատական դեպքերի ընդհանրացման միջոցով,

5) մշակել միջանձնային հարաբերությունների զարգացմանն ու ուսումնական մոտիվացիայի բարձրացմանն ուղղված հոգեբանական մեթոդական առաջարկների համալիր ծրագիր:

Հետազոտության ընթացքում մեր կողմից առաջադրվել է հետևյալ **գիտական վարկածը՝**

Սովորողների միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները որոշակիորեն ազդում են միջին դպրոցի աշակերտերի ուսումնական մոտիվացիայի դինամիկայի վրա:

Հիմնական վարկածից մակածվում են հետևյալ ենթավարկածները.

1. Մանկավարժ-աշակերտ փոխադարձ վստահելի, հարգալից հարաբերությունների ձևավորումը հանգեցնում է միջին դպրոցում սովորողների ուսումնական մոտիվացիայի աճին:

2. Ուսումնական մոտիվացիայի և դրա տեսակի վրա ազդեցություն ունեն սովորողների կողմից ուսումնական խմբի նկատմամբ վերաբերմունքի առանձնահատկությունները, համադասարանցիների՝ իրար նկատմամբ ունեցած վերաբերմունքը և փոխհարաբերությունները:

3. Միջին դպրոցում սովորողների ընտանեկան լարված, կոնֆլիկտային հարաբերությունները բացասաբար են ազդում մանկավարժ- աշակերտ, աշակերտ- աշակերտ հարաբերությունների վրա և իջեցնում են ուսման մոտիվացիան: Մասնավորապես, ընտանեկան ասոցիալ (հակասոցիալական) հարաբերությունները թուլացնում են սովորողի ուսումնական մոտիվացիան և սոցիալամետ հարաբերությունները նպաստում են ուսումնական մոտիվացիայի աճին:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Աշխատանքի տեսական հիմքերն են հանդիսանում Կ. Լևինի սոցիալական գիտությունների դաշտի տեսությունը, Սոցիալական ինտերակցիոնիզմի տեսությունը (Ջ. Միդ, Հ. Բլումեր, Տ. Շիբուտանի և ուր), Վ. Շուտցի միջանձնային հարաբերությունների ինտերպերսոնալ տեսությունը, Վ.Մյասիշևի հարաբերությունների տեսությունը, Ե. Սերեդայի զարգացնող միջանձնային հարաբերությունների հայեցակարգը, Է. Դեսի և Ռ. Ռայանի ինքնադետերմինացիայի տեսությունը, Լ. Բոժովիչի, Ա. Մարկովայի, Ի. Վ.

Դուբրովինայի հայեցակարգային մոտեցումները սոցիալական և ճանաչողական դրդապատճառների հիմնախնդրի շուրջ: Ս. Ռ. Գևորգյանի, Վ. Ս. Կարապետյանի՝ կրթական նորարարությունների ոլորտում ժամանակակից մարդու հայեցակարգը:

Հետազոտության օբյեկտը միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի հարաբերակցությունն է:

Հետազոտության առարկան միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի արդյունավետ փոխներգործությունը պայմանավորող սոցիալ- հոգեբանական գործոններն են:

Հետազոտության մեթոդներն ու կազմակերպումը: Հետազոտության ընթացքում կիրառվել են հոգեբանական դիտման, զրույցի մեթոդները, դասի ընթացքում ուսուցչի խոսքային ներգործության հետազոտման մեթոդիկա, ուսուցիչների կոմպետենտության փորձագիտական գնահատումների մեթոդիկան, Ի. Սոլոմինի «Գունային փոխաբերությունների մեթոդիկա»-ն, Տ. Պ. Անոխինայի «Իմ դասարանը» նկարային մեթոդիկայի ձևափոխված տարբերակը, Լ.Դյուսի «Հեքիաթները որպես ընտանիքում երեխաների միջանձնային փոխհարաբերությունների ուսումնասիրման մեթոդիկա»-ն, «Դասարանի հետ դեռահասի հարաբերությունների գնահատումը» մեթոդիկան, Ա. Մարկովայի և Լ. Բոժովիչի մշակմամբ «Դրդապատճառների սանդուղք» մեթոդիկան, անհատական դեպքերի իրավիճակների, վերլուծության մեթոդը:

Էմպիրիկ (փորձնական) հետազոտությունը կատարվել է (2009-2012թթ) Երևանի Ֆ. Նանսենի անվան թիվ 150 և Գ. Զոհրապի անվան թիվ 43 դպրոցներում (2010-2013թթ): Հետազոտությանը մասնակցել է թիվ 150 դպրոցի 5-9-րդ դասարանների թվով 115 աշակերտ (56 տղա 59 աղջիկ), և Գ. Զոհրապի անվան թիվ 43 դպրոցի համապատասխանաբար 5-9-րդ դասարանների 93 աշակերտ (46 տղա 47 աղջիկ): Հետազոտությանը մասնակցել են թիվ 150 հիմնական դպրոցի -16 և համապատասխանաբար՝ թիվ 43 դպրոցի 13 ուսուցիչներ:

Ատենախոսության տեսական նշանակությունը: Միջին դպրոցում «աշակերտ-աշակերտ», «մանկավարժ-աշակերտ», «աշակերտ-ծնող» փոխհարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի փոխազդեցության բացահայտված սոցիալ- հոգեբանական գործոնները ընդլայնում և լրացնում են միջին դպրոցում սովորողների միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի տեսական և մեթոդական հիմքերի վերաբերյալ արդի գիտական մոտեցումները: Հիմնախնդրի ուսումնասիրության արդյունքում կատարված տեսական ընդհանրացումները միտված են նաև հանրակրթական սուբյեկտների զարգացնող փոխհարաբերությունների դերի նորովի իմաստավորմանն ու միջին դպրոցում արդյունավետ ուսումնառության կազմակերպման եղանակների գիտատեսական հիմքերի մշակմանը:

Ատենախոսության գործնական նշանակությունը:

Կատարված հետազոտությունը համալրում է միջին դպրոցում սովորողների միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի զարգացմանն ուղղված հոգեբանական աշխատանքի կազմակերպման գիտական փորձը, առաջարկում է այժմեական, հիմնական դպրոցներում կիրառելի հոգեբանական աջակցության արդյունավետ մարտավարություն: Հետազոտության արդյունքներից ստացված գործնական առաջարկները կարող են կիրառվել միջին դպրոցում աշխատող ուսուցիչների, հոգեբանների, դասղեկների հոգեբանամանկավարժական պատրաստվածության բարձրացման նպատակով, ինչպես նաև համալրել «Սոցիալական հոգեբանություն», «Միջանձնային հարաբերությունների հոգեբանություն», «Հոգեբանամանկավարժական կարգավորում» դասընթացները՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ատենախոսության գիտական նորույթը: Բացահայտվել և բնութագրվել են այն սոցիալ-հոգեբանական գործոններն, որոնք ապահովում են միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի արդյունավետ փոխներգործության ընթացքը:

Հետազոտության փորձաքննությունը: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթների մասին պարբերաբար զեկուցվել է Խ. Աբովյանի հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի նիստերում: Հետազոտության ընթացքի և ստացված արդյունքների մասին զեկուցվել է նաև մի շարք գիտաժողովներում՝ «Մանկավարժական որակի հոգեբանական հիմնախնդիրները» (Աղավնաձոր, ՀՊՄՀ, 2010), (Վանաձոր, ՎՊՄԻ 2011), «Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար. մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. տեսություն և պրակտիկա» (Երևան, ՀՊՄՀ 2012), «Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» (Երևան, ՀՊՄՀ, 2014):

Հետազոտության հավաստիությունն ու հուսալիությունը ելնում է հոգեբանական հետազոտությունների համար առաջադրված գիտական պահանջներից: Արդյունքներն ապահովել են ընտրված մեթոդաբանական հիմքերը, կիրառված մեթոդները, ուսումնասիրվողների անհրաժեշտ թվաքանակը, ինչպես նաև արդյունքների մշակման մաթեմատիկական հիմնավորումները:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1) Ուսումնական մոտիվացիայի և միջանձնային հարաբերությունների փոխազդեցությունը դինամիկ է և կարող է փոփոխվել արտաքին, իրադրային ինչպես նաև տարբեր սոցիալ-հոգեբանական ներգործությունների ազդեցության հետևանքով (օրինակ՝ խրախուսանքը, ընդունվածությունը խմբում, գնահատականը և այլն):

2) Մանկավարժ-աշակերտ արդյունավետ, փոխվստահությամբ, հարգանքով հագեցած փոխհարաբերությունները, որոնք մեծամասամբ

պայմանավորված են ուսուցչի սոցիալ-հոգեբանական բարձր կոմպետենտությամբ, նպաստում են աշակերտի ուսումնական մոտիվացիայի աճին: Հակառակ դեպքում նվազում է աշակերտների ուսումնական մոտիվացիան և դպրոցի նկատմամբ բացասական վերաբերմունք է ձևավորվում:

3. Միջին դպրոցում սովորողների ընտանեկան անբարենպաստ հարաբերությունները բացասաբար են ազդում մանկավարժ-աշակերտ հարաբերությունների վրա և իջեցնում են ուսման մոտիվացիան: Համադասարանցիների՝ միմյանց նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաև սովորողի ինքնավերաբերմունքն ազդում է ուսումնական մոտիվացիայի վրա:

4. Դասարանական խմբի նկատմամբ սովորողների դիրքորոշումն ազդում է ուսումնական մոտիվացիայի վրա: Ուսումնական խումբը, որպես փոխօգնության, խմբային համագործակցության, տեղեկատվության փոխանակման, ուսումնական հաջողությունների հասնելու միջոցի ընկալումը նպաստում է ուսումնական մոտիվացիայի բարձրացմանը:

5. Ուսման նկատմամբ վերաբերմունքի, ուսումնական մոտիվացիայի և միջանձնային փոխհարաբերությունների հարաբերակցության առանձնահատկությունների հիման վրա կարելի է տարբերակել միջին դպրոցում սովորողների հետևյալ խմբերը՝ ներդաշնակ, հարմարվող (դժվարություններ հաղթահարող), թաքնված կոնֆլիկտային, հաղորդակցվող կամ ցուցադրական, մերժող, բացահայտ կոնֆլիկտային, մերժված:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ տեսական, փորձարարական և մեթոդական, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, նպատակից բխող հետազոտական խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավոր-վածությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի առաջին՝ **«Միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունները և ուսումնական մոտիվացիան որպես հոգեբանական հետազոտության հիմնախնդիր»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից՝ *«Միջանձնային փոխհարաբերությունների հիմնախնդիրը հոգեբանության մեջ», «Միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների սոցիալ-*

հոգեբանական բնութագիրը», «Ուսումնական մոտիվացիայի զարգացման հոգեբանական առանձնահատկությունները միջին դպրոցում»:

Առաջին ենթագլխում՝ *«Միջանձնային փոխհարաբերությունների հիմնախնդիրը հոգեբանության մեջ»* ներկայացված են հիմնախնդրի լուսաբանմանն ուղղված արտասահմանյան, ռուսական և հայ հեղինակների մոտեցումներն ու առաջարկած ընդհանուր դրույթները: Սույն ենթագլխում մանրամասն վերլուծվում ու մեկնաբանվում են Կ. Լևինի հոգեբանական դաշտի տեսությունը, Վ. Շուտսի, միջանձնային հարաբերությունների տեսությունը, Սոցիալական ինտերակցիոնիզմի տեսությունը (Ջ. Միդ, Հ. Բլումեր, Տ. Շիբուտանի և ուր), Վ. Մյասիշևի հարաբերութունների տեսությունը, Ե. Ի. Սերեդայի զարգացնող միջանձնային հարաբերությունների հայեցակարգը, Ե. Պ. Իլյինի, Ն. Օբոզովի հայեցակարգային մոտեցումները և այլ հեղինակների կողմից առաջարկած միջանձնային հարաբերությունների հիմնական հայեցակարգերը:

Երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է *«Միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների սոցիալ-հոգեբանական բնութագիրը»*, անդրադարձ է կատարվել դեռահասի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների շուրջ տեսական հիմնադրույթների հոգեբանական վերլուծությանը:

Ներկայացվում են միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների ուսումնասիրմանը վերաբերող տեսական հիմնադրույթների հոգեբանական վերլուծությունը սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցության համատեքստում:

Ա. Ռեանի և Յա. Կոլոմինսկու աշխատությունում դեռահասների ներխմբային հարաբերությունների դինամիկան վերլուծվում է տարիքային փոփոխությունների համատեքստում: Մեկ այլ հետազոտության մեջ՝ (Օ. Ն. Իստրատովա) դեռահասի հարաբերությունների դինամիկան բացատրվում է հարաբերությունների երկակիությամբ, երկկողմանիությամբ, ներքին և արտաքին հակասությունների համատեքստում:

Քննարկվում և վերլուծվում են Գ.Ա. Ցուկերմանի, Լ. Ֆրիդմանի, Ի. Կուլագինայի կիրառական հետազոտությունների արդյունքները, մեկնաբանվում է Լ. Ա. Ռեգուշի կողմից դեռահասների ինքնավերաբերմունքի վերաբերյալ պրոբլեմային իրավիճակների որակական վերլուծությունները, ինչպես նաև մեկնաբանվում է Ի. Կ. Հարությունյանի ատենախոսական աշխատանքում քննարկված միջին դպրոցի աշակերտի առջև նոր ուսումնական պահանջների, ադապտիվության գործոնի դերը: Անդրադառնում ենք Ս. Ռ. Գևորգյանի առաջարկած հաղորդակցման սուբյեկտների փոխհասկացման ընդհանուր մեխանիզմերին:

Այս գլխի ամփոփիչ՝ *«Ուսումնական մոտիվացիայի զարգացման հոգեբանական առանձնահատկությունները միջին դպրոցում»* բաժնում վերլուծության ենք ենթարկել «մոտիվ» և «մոտիվացիա» հասկացությունների

բազմաբնույթ մեկնաբանությունները: Մասնավորապես, հոգեդինամիկ (Զ. Ֆրոյդ) ուղղության մեջ մոտիվը դիտվում է որպես մղումների արդիականացում: Իսկ ահա Կ. Լևինի «դաշտի տեսության» մեջ մոտիվը համարվում է անձի վարքի կարգավորիչ, Ա. Մասլոուի տեսության մեջ անձի վարքի մոտիվացիան բացատրվում է պահանջմունքներով, որոնք արտահայտվում են վերջինիս՝ անընդհատ զարգանալու ձգտմամբ, Ա. Լեոնտևի գործունեության տեսության մեջ՝ անձի վարքի և գործունեության նպատակաուղղվածություն, Հ. Հեկհաուզենի հիմնադրույթում՝ որպես ցանկալի դրություն անհատ-միջավայր փոխհարաբերությունների համակարգում և այլն:

Ե.Պ. Իլյինը, մեկնաբանելով ուսումնական գործունեության մոտիվացիայի դասակարգումները, գտնում է, որ աշակերտի ուսումնական ակտիվությունը պայմանավորված է շատ գործոններով՝ պահանջմունքներ, նպատակներ, դիրքորոշումներ, պարտքի զգացում, հետաքրքրություններ և այլն: Ա. Կ. Մարկովայի տիպաբանության մեջ մի կողմից շեշտադրվում է մոտիվի բովանդակությունը, որը կապված է բուն ուսումնական գործունեության հետ, մյուս կողմից՝ դինամիկան՝ բնութագրելով մոտիվի տեսակն ու արտահայտվածությունը: Մենք հենվելով Է. Դեսի և Ռ. Ռայանի ինքնադետերմինացիայի տեսության գաղափարների վրա՝ գտնում ենք, որ ուսումնական մոտիվացիայի զարգացման մեջ ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունը անհրաժեշտ գործոն է: Այս համատեքստում, մեծապես բարձրանում է աշակերտ-ուսուցիչ աջակցող հարաբերությունների խթանման, ուսուցչի սոցիալ-հոգեբանական կոմպետենտության բարձրացման դերն ու նշանակությունը:

Ամփոփելով հիմնախնդրի շուրջ կատարված գիտական հետազոտությունների վերլուծությունը՝ նշենք, որ դեռևս բացակայում են փոխներգործուն ուսուցման պայմաններում ուսումնաճանաչողական դրդապատճառների, միջանձնային աջակցող հարաբերությունների ինչպես նաև ուսուցչի հետ վստահելի, զարգացնող հարաբերությունների ձևավորման սոցիալ-հոգեբանական գործոնների և պայմանների ուսումնասիրությունները: Ուսումնական իրադրության մեջ հատվում են ուսումնական մոտիվացիան և միջանձնային հարաբերությունները, քանի որ առանց միջանձնային աջակցող, համագործակցային հարաբերությունների ուսումնական մոտիվացիան էապես կտուժի, ընդհուպ հասնելով կտրուկ անկման: Հետևաբար ուսումնական մոտիվացիան առանց միջանձնային հարաբերությունների չի կարող աջակցել կամ ուղղորդել ուսումնական գործընթացը:

Աշխատանքի երկրորդ՝ **«Միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի հարաբերակցության փորձարարական հետազոտություն»** գլուխը բաղկացած է 3 ենթագլուխներից: Ներկայացված են հետազոտության կազմակերպումն ու մեթոդիկան, կատարված հետազոտության արդյունքները և դրանց սոցիալ-հոգեբանական վերլուծությունը:

Առաջին *«Հետազոտության կազմակերպումը և մեթոդները»* ենթագլխում նկարագրված են հետազոտության կազմակերպման պայմանները, մեթոդիկաները, հիմնավորված է հետազոտվողների ընտրանքը: Հետազոտությունը կատարվել է Երևանի Ֆ. Նանսենի անվան թիվ 150 հիմնական դպրոցում: Հետազոտությանը մասնակցել է 5-9-րդ դասարանների թվով 115 աշակերտ (56 տղա 59 աղջիկ), և Գ. Զոհրապի անվան թիվ 43 դպրոցի համապատասխանաբար 5-9-րդ դասարանների 93 աշակերտ (46 տղա 47 աղջիկ): Հետազոտությանը մասնակցել են թիվ 150 հիմնական դպրոցի 16 ուսուցիչներ, համապատասխանաբար՝ թիվ 43 դպրոցի 13 ուսուցիչներ:

Հետազոտության 1-ին փուլում սահմանել ենք հետազոտության նպատակը, առաջադրվել և ձևակերպվել է վարկածը: Հետազոտության ընթացքում կիրառվել են հոգեբանական զրույցի, դիտման մեթոդները:

Հետազոտության 2-րդ փուլում մեր կողմից անց են կացվել փորձագիտական գնահատումներ:

Հետազոտության 3-րդ փուլում՝ կիրառել ենք Ա. Մարկովայի և Մ. Բոժովիչի «Դրդապատճառների սանդուղք» մեթոդիկան, որի նպատակն է պարզել աշակերտների սոցիալական և ճանաչողական ուսումնական դրդապատճառները և դրանց ներդաշնակ զուգակցումները: Այս մեթոդի տեսական հիմնավորումը ներկայացված է 1-ին գլխի 2-րդ դրվագում:

Այնուհետև փորձել ենք պարզել, թե ինչ հարաբերակցություն կա աշակերտի ուսումնական մոտիվացիայի, աշակերտի կողմից ուսումնական խմբի ընկալման ձևի, ուսուցչի սոցիալ- հոգեբանական կոմպետենտության մակարդակի միջև: Այդ խնդրի լուծման համար էմպիրիկ հետազոտության ընթացքում մեր կողմից կիրառվել է «Գունային փոխաբերությունների մեթոդիկան», որի նպատակն է ուսումնասիրել աշակերտների ուսումնական դրդապատճառները և վերաբերմունքը մի շարք հասկացությունների նկատմամբ (ուսում, ընկերներ, մայր, հայր, ուսուցիչ, դասղեկ, սպառնալիք վախ, իմ հրապուրանքը, իմ ներկան, իմ անցյալը, իմ ապագան): «Գունային փոխաբերությունների մեթոդիկան» ենթարկվում է որակական վերլուծության. այն մի կողմից բացահայտում է դեռահասի հիմնային և ակտուալ պահանջմունքները, մյուս կողմից՝ դեռահասի վերաբերմունքն ուսման, ընտանիքի, համադասարանցիների նկատմամբ:

Մենք ի սկզբանե, ենթադրել ենք, որ ընտանեկան միջանձնային հարաբերությունների բնույթն ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում է դեռահասի դասարանում միջանձնային հարաբերությունների վրա: Այս ենթադրությունը ստուգելու նպատակով համեմատության են ենթարկվել «Լ.Դյուսի հեքիաթները որպես ընտանիքում երեխաների միջանձնային փոխհարաբերությունների ուսումնասիրման» և «Գունային փոխաբերություններ» մեթոդիկայի արդյունքները:

Դասարանում դեռահասների հարաբերություններն ուսումնասիրելու նպատակով, մեր կողմից կիրառվել է «Դասարանի հետ դեռահասի

հարաբերությունների գնահատումը» մեթոդիկան: Հարցարանի մշակման ժամանակ, որպես ելակետային՝ օգտագործվել է 51 ենթադրություններից կազմված ցուցակ, որոնցից յուրաքանչյուրը արտացոլում է անհատի կողմից խմբի ընկալման որոշակի «ձև»: Մեթոդիկան մեզ հնարավորություն է ընձեռել հայտնաբերել աշակերտի կողմից ուսումնական խմբի ընկալման երեք հնարավոր ձևերը (անհատականացված, խմբային և պրագմատիկ): Մենք ակնկալել ենք բացահայտել, թե ինչ կապ կա աշակերտի կողմից ուսումնական խմբի ընկալման ձևի, աշակերտի վերաբերմունքի (ուսման, ընկերների, ուսուցչի, ներկայի, ապագայի), ուսումնական մոտիվացիայի, ինչպես նաև ուսուցչի սոցիալ-հոգեբանական կոմպետենտության մակարդակի միջև:

«Դասարանի հետ դեռահասի հարաբերությունների գնահատումը» մեթոդիկայից ստացված արդյունքներն ամբողջացնելու և միջին դպրոցում սովորողների միջանձնային հարաբերությունների մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով կիրառել ենք «Իմ դասարանը» նկարային մեթոդիկայի ձևափոխված տարբերակը: «Իմ դասարանը» նկա-րային մեթոդիկան թույլ է տվել պարզել աշակերտի հարաբերութունը համադասարանցիների, ուսուցչի հետ և ուսումնական մոտիվացիայի արտահայտվածությունը: «Իմ դասարանը» նկարային մեթոդիկայի կիրառումը զուգորդվել է հոգեբանական հարցազրույցի և «Իմ դասարանը» շարադրությունների հետ: Շարադրությունների և հարցազրույցների արդյունքները վերլուծվել են կոնտենտ վերլուծության տեխնիկայի միջոցով: Հետազոտության 4-րդ փուլում մեր կողմից կատարվել են ստացված տվյալների մշակում, որի նպատակն օրինաչափությունների վերհանումն է: Տարբեր փոփոխականների միջև համահարաբերակցական կապերը բացահայտելու համար օգտագործել ենք Սպիրմենի կարգային համահարաբերակցության բանաձևը: Վիճակագրական վերլուծությունը կատարվել է (Statistica 7) համակարգչային ծրագրի օգնությամբ:

Փորձարարական հետազոտության 5-րդ փուլում անցկացրել ենք անհատական դեպքերի վերլուծություններ:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է *«Միջանձնային փոխհարաբերությունների և ուսումնական դրդապատճառների շարժընթացի փորձարարական հետազոտությունը»*, ներկայացվում են փորձագիտական գնահատման արդյունքները, որի նպատակն է պարզել դեռահասների ուսումնական մոտիվացիայի ու մանկավարժների սոցիալ-հոգեբանական կոմպետենտության միջև հնարավոր կապն ու հարաբերակցությունը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ այն ուսուցիչները, ովքեր աչքի են ընկել սոցիալ-հոգեբանական կոմպետենտության բարձր մակարդակով, գրեթե միշտ խթանում են սովորողների հետաքրքրությունը առաջադրանքի նկատմամբ: «Դրդապատճառների սանդուղք» մեթոդիկայով անցկացված հետազոտության արդյունքները ներկայացված են գծապատկերի տեսքով:

Գծապատկեր 1.



«Դրդապատճառների սանդուղք» մեթոդիկայի արդյունքները

Տարիքի աճմանը զուգընթաց, նկատում ենք ուսումնական սոցիալական մոտիվների նախապատվության աճ, բայց միայն տարիքային գործոնը, չէ որ ազդում է մոտիվների շարժընթացի վրա, որովհետև կարծում ենք, որ միայն տարիքային գործոնը դիտարկելը միակողմանի մոտեցում է, ինչին անդրադառնում ենք տեսական հիմնավորումներում:

Գծապատկեր 2



«Դասարանի հետ դեռահասի հարաբերությունների գնահատումը» մեթոդիկայի արդյունքները

Ներկայացված գծապատկերում տեսանելի է, թե տարիքի աճմանը զուգընթաց, դասարանից դասարան, ինչպես են փոփոխվում դեռահասի կողմից ուսումնական խմբի ընկալումները: Ուսումնական խմբի անհատական ընկալումները դասարանից դասարան տեղափոխվելով՝ նվազում են, և աճում է ուսումնական խմբի ընկալման խմբային ձևը: Այսինքն՝փորձարկվողների գերակշիռ մասը նախապատվությունը տալիս են խմբային համագործակցությանը, փոխօգնությանը, ընդհանուր խմբային նպատակներին, ուսման մեջ խմբային հաջողության հասնելու խմբայի միջոցներին:

«Դասարանի հետ դեռահասի հարաբերությունների գնահատումը», և «Դրդապատճառների սանդուղք» մեթոդիկաներից ստացված արդյունքներն ամբողջացնելու և միջին դպրոցում սովորողների միջանձնային հարաբերությունների և ուսումնական դրդապատճառների մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով կիրառել ենք «Իմ դասարանը» նկարային մեթոդիկայի ձևափոխված տարբերակը:

Աղյուսակ 1

Սանդղակների Նկարագրությունը	5-րդ դասարան	6-րդ դասարան	7-րդ դասարան	8-րդ դասարան	9-րդ դասարան
Համագործակցություն ուսուցիչների հետ	12%	7%	11%	16%	17%
Համագործակցություն համադասարանցիների հետ	8%	16%	25%	28%	28%
Ուսումնական ճանաչողական մոտիվացիա	34%	25%	17%	16%	18%
Ուսումնական սոցիալական մոտիվացիա	28%	35%	33%	30%	29%
Ուսումնական պրոցեսից դուրս մնացածներ	11%	12%	9%	6 %	5%
Դասարանից մեկուսացածներ	7%	5%	5%	4%	3%

«Իմ դասարանը» նկարային մեթոդիկայի ցուցանիշները

Լ. Դյուսի «*Հեքիաթները որպես ընտանիքում երեխաների միջանձնային հարաբերությունների ուսումնասիրում*» մեթոդիկայով ստացված տվյալները ցույց են տալիս, որ ընտանեկան հարբերությունների գործոնն անուղղակի կերպով ազդում է աշակերտի՝ դասարանի հետ կառուցվող հարաբերությունների ու ուսումնական մոտիվացիայի վրա: Աշակետների մեծ մասի մոտ ընտանեկան հարաբերությունները պրոսոցիալ են, սակայն ամեն դասարանում որոշ զանգվածի մոտ արտահայտված են ասոցիալ հարաբերությունները:

Գծապատկեր 3



«Լ. Դյուսի հեքիաթները» մեթոդիկայով անցկացված հետազոտության արդյունքները

Երկրորդ գլխի երրորդ՝ *«Հետազոտության արդյունքները և վերլուծությունը»* ենթագլխում ներկայացված՝ էմպիրիկ հետազոտության արդյունքները վերլուծելու համար դրանք նախապես ենթարկվել են մաթեմատիկական-վիճակագրական վերլուծության: Այդ ընթացքում մենք օգտագործել ենք Սպիրմենի կարգային համահարաբերակցության բանաձևը, որը թույլ է տվել բացահայտել տարբեր փոփոխականների միջև բազմաբնույթ կապերն ու հարաբերակցությունը: Վիճակագրական վերլուծությունը կատարվել է (Statistica 7) համակարգչային ծրագրի օգնությամբ: Այնուհետև ստացված արդյունքները տեղադրվել են միջհամահարաբերակցական մատրիցայում, որն ավելի տեսանելի է դարձնում ստացված կապերը: Վերլուծությունը թույլ է տվել եզրակացնել մի շարք օրինաչափ կապերի և փոխկապվածությունների մասին: Մասնավորապես հետազոտությամբ պարզվել է, որ գոյություն ունի համահարաբերակցություն ուսումնական մոտիվների, ընտանեկան փոխհարաբերությունների բնույթի և միջանձնային փոխհարաբերություններում ուսումնական խմբի ընկալման ձևի միջև: Այս օրինաչափ կապերի բացահայտումը հնարավորություն է տալիս դրանք հաշվի առնել սովորողների հոգեբանական օգնության և մանկավարժական ներգործությունների ընթացքում:

Աշխատանքի երրորդ՝ **«Միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի զարգացման հոգեբանական պայմանները»** գլխի առաջին՝ *«Միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի հարաբերակցության ուսումնասիրությունը անհատական դեպքերի վերլուծության մեթոդով»* դրվագում, միջին դպրոցի սովորողների միջանձնային հարաբերությունների, ուսումնական մոտիվացիայի հարաբերակցության շարժընթացի էմպիրիկ ուսումնասիրության արդյունքների առավել ամբողջացման, դրանք հոգեբանական պրակտիկայում ներդնելու, ինչպես նաև ռիսկային գործոնների առավել խորքային վերլուծության համար ներկայացվել են մեր կողմից իրականացված անհատական դեպքերի վերլուծությունների ամփոփ պատկերը:

Հոգեբանական որակական վերլուծության են ենթարկվել դասարանային, ընտանեկան պրոբլեմային իրավիճակներ, դրանք համադրվել են աշակերտի կողմից գրված «Դյուսի հեքիաթներ»-ի, «Գունային փոխաբերություններ» մեթոդիկաների արդյունքների վերլուծությունների հետ: Անհատական վերլուծութուններում տեսանելի են ընտանեկան հարաբերությունների, աշակերտի կողմից ուսումնական խմբի ընկալումների, ուսուցչի սոցիալ-հոգեբանական կոմպետենտության և ուսումնական մոտիվացիայի միջև արտահայտված կապերը:

Ամփոփելով անհատական դեպքերի հոգեբանական վերլուծությունները՝ եզրակացնում ենք, որ միջին դպրոցում սովորող դեռահասի միջանձնային հարաբերություններում մերժվածությունը, ուսումնական մոտիվացիայի անկումը, շատ դեպքերում կախված է անբարենպաստ ընտանեկան միջավայրից, որում

առկա անվստահելի փոխհարաբերություններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են դեռահասի դասարանում կառուցվող ուսուցիչ-աշակերտ, աշակերտ- աշակերտ հարաբերությունների վրա:

Ակներև է, որ այն ուսուցիչները, որոնք կարողանում են դեռահասի հետ հարաբերություններում ստեղծել սուբյեկտ-սուբյեկտային հարաբերություններ, դառնում են վստահելի, սկսում են ճանաչել իրենց աշակերտին, իմանալ նրանց թույլ և ուժեղ կողմերը նպաստում են միջանձնային հարաբերությունների վերակառուցմանը և ուսումնական մոտիվացիայի ուժեղացմանը: Միջին դպրոցում սովորող այն աշակերտների, որոնց մոտ գերակշռում էր միջանձնային հարաբերություններում ուսումնական խմբի ընկալման խմբային ձևը, աչքի էին ընկնում բարձր սոցիալական դրդապատճառներով: Նրանց համար նշանակալից է ուսումնական խմբի կարծիքը, իրենց տեղն ուսումնական խմբում, համադասարանցիների ընկերակցությունը:

Երրորդ գլխի երկրորդ՝ «*Միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի արդյունավետ կապն ապահովող հոգեբանական գործոնները*» բաժնում առանձնացվել են մի շարք հոգեբանական գործոններ, որոնք պայմանավորում են աշակերտական խմբում միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի արդյունավետ փոխներգործության ընթացքը. *1.ուսուցչի սոցիալ-հոգեբանական կոմպետենտությունը, 2. ներխմբային համարժեք ընկալումները, դիրքորոշումները, սպասումները (անհատը խումբը ընկալում է որպես միջոց, որը նպաստում է այս կամ այն անհատական նպատակների ձեռքբերումը) 3. ընտանեկան հարաբերությունների սոցիալամետ բնույթը, 4. միջանձնային փոխհարաբերություններում հարմարվածությունը:*

Հետազոտությունների արդյունքների վերլուծելության և ընդհանրացման միջոցով մեր կողմից առանձնացվել են ուսման և միջանձնային հարաբերությունների նկատմամբ դեռահասի վերաբերմունքի 7 տիպեր, որոնք կապվում են ուսումնական մոտիվացիայի, անհատի կողմից ուսումնական խմբի ընկալման ձևի, դեռահասի ընտանեկան փոխհարաբերությունների բնույթի և ուսուցիչների սոցիալ-հոգեբանական կոմպետենտության մակարդակի հետ: Դրանք են՝ *ներդաշնակ, հարմարվող (դժվարություններ հաղթահարող), թաքնված կոնֆլիկտային, հաղորդակցվող կամ ցուցադրական, մերժող, բացահայտ կոնֆլիկտային, մերժված*:

Երրորդ գլխի ամփոփիչ ենթագլուխը վերնագրված է «*Մեթոդական առաջարկներ միջին դպրոցի աշակերտների փոխհարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի զարգացման համար*»: Այստեղ փոխներգործուն ուսուցման պայմաններում ուսուցչի ուսումնադաստիարակչական ներգործությունները արդյունավետ դարձնելու, միջանձնային հարաբերությունների զարգացման և ուսումնական մոտիվացիայի ներդաշնակ համադրման նպատակով՝ մշակել ենք մեթոդական մի շարք հանձնարարականներ: Վերջիններս ներդրվել են հոգեբանական զարգացման միջոցառումների համալիր ծրագրում: Առաջարկվող ծրագրի սկզբունքները

կարող են կիրառվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային եղանակով՝ ծնողների, աշակերտների և ուսուցիչների հետ աշխատանքում:

Մեթոդական առաջարկները մշակվել են հետազոտությունների արդյունքում միջին դպրոցի սովորողների միջանձնային հարաբերությունների և ուսումնական դրդապատճառների փոխներգործության 7 տիպերից յուրաքանչյուրի հետ համարժեք հոգեբանական աշխատանքի մարտավարության ընտրության համար: Այնուհետև, բացահայտելով այդ տիպերի հոգեբանական առանձնահատկությունները՝ առաջարկել ենք դրանց համապատասխան հոգեբանամանկավարժական միջատության համալիր ծրագիր:

Ամփոփելով մեր կողմից իրականացված տեսական և փորձնական հետազոտությունների արդյունքները՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Միջանձնային հարաբերությունների համակարգը ոչ միայն միջնորդավորված է, այլև որոշակիորեն պայմանավորում է գործունեության ընդհանուր նպատակների, խնդիրների և դրդապատճառների առաջացումն ու զարգացումը, այսինքն՝ գործում է համակարգային դինամիկ փոխազդեցություն: Միջին դպրոցի սովորողների միջանձնային հարաբերությունները և ուսումնական դրդապատճառները բարդ փոխազդեցության մեջ են միմյանց հետ, որն արտահայտվում է դրանց բաղադրիչների միջև համահարաբերակցական կապերով: Մասնավորապես գոյություն ունեն համահարաբերակցական կապեր ուսումնական դրդապատճառների տեսակի և սովորողների կողմից ուսումնական խմբի նկատմամբ ունեցած դիրքորոշման, վերաբերմունքի միջև: Մասնավորապես, ուսումնական խմբի նկատմամբ անհատականացված ընկալման դեպքում, որն արտահայտվում է խումբը՝ իբրև ոչ համագործակցային, երբեմն նաև խոչընդոտող միջոց դիտարկելու ձևով, աճում է ուսման իմացական կամ ճանաչողական մոտիվացիան: Իսկ ահա ուսումնական խմբի, որպես համագործակցային կամ աջակցող միջոցի ընկալման դեպքում միջին դպրոցի աշակերտների շրջանում դրսևորվում են առավելապես ի հայտ են գալիս սոցիալական և ճանաչողական մոտիվների ներդաշնակ զուգակցումներ:

2. Միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի արդյունավետ փոխներգործության ընթացքը մեծապես պայմանավորված է մի շարք սոցիալ-հոգեբանական գործոններով: Միջանձնային հարաբերությունների և ուսումնական դրդապատճառների քանակական և որակական փոփոխություններն արտահայտվել են դրանց վրա ազդող գործոնների փոխազդեցության ընթացքում:

Աշակերտի կողմից ուսումնական խմբի՝ որպես փոխօգնության, խմբային համագործակցության, տեղեկատվության փոխանակման, ուսումնական հաջողությունների հասնելու միջոցի ընկալումը և համապատասխան դիրքորոշումները նպաստում են ուսումնական մոտիվացիայի բարձրացմանը: Համադասարանցիների՝ միմյանց նկատմամբ վերաբերմունքը,

(ընդունվածությունը համադասարանցիների կողմից, մեկուսացվածությունը, մերժվածությունը), ինքնավերաբերմունքը (դրական, բացասական) նույնպես ազդում են ուսման մոտիվացիայի վրա:

3. Ընտանեկան հարաբերությունների առանձնահատկությունները և ուսումնական դրդապատճառները գտնվում են նշանակալից համահարաբերակցության մեջ: Մասնավորապես, ընտանեկան սոցիալամետ հարաբերությունները հիմք են հանդիսանում աշակերտի կողմից ուսումնական խմբի՝ որպես խմբային համագործակցության, տեղեկատվության փոխանցման, փոխօգնության, ուսումնական հաջողությունների ձեռքբերման միջոցի ընկալման համար, ինչն էլ նպաստում է սոցիալական և ուսումնական մոտիվացիաների ներդաշնակ զուգակցումներին: Մյուս կողմից, ընտանեկան ասոցիալ հարաբերությունները հիմք են հանդիսանում աշակերտների կողմից ուսումնական խմբի անհատականացված ընկալման համար, ինչն էլ զգալիորեն նպաստում է ուսումնական դրդապատճառների թուլացմանը:

4. Հետազոտություններով հիմնավորվել և ապացուցվել է նաև, որ մանկավարժների սոցիալ-հոգեբանական կոմպետենտության բարձր մակարդակը նպաստում է սովորողների ուսումնական մոտիվացիայի բարձրացմանը: Չնայած ընտանեկան ասոցիալ հարաբերությունների և ներխմբային անհամարժեք դիրքորոշումների ոչ նպաստավոր ազդեցությանը, ուսուցչի սոցիալ հոգեբանական բարձր կոմպետենտությունը խթանում է սովորողների ուսումնական մոտիվացիայի դրական շարժընթացը: Ուստի մենք փորձարկել և առաջարկել ենք մի շարք միջոցներ՝ ուղղված միջին դպրոցի աշակերտների միջանձնային հարաբերությունների ու ուսումնական դրդապատճառների հետ աշխատանքում մանկավարժների սոցիալ-հոգեբանական կոմպետենտության բարձրացմանը:

5. ՈՒսումնական մոտիվացիայի և միջանձնային հարաբերությունների փոխազդեցության առանձնահատկությունների հիման վրա տարբերակվել և դասակարգվել են սովորողների հետևյալ հիմնական տիպերը՝ ներդաշնակ, հարմարվող (դժվարություններ հաղթահարող), թաքնված կոնֆլիկտային, հաղորդակցվող կամ ցուցադրական, մերժող, բացահայտ կոնֆլիկտային, մերժված: Այս դասակարգումը հիմք է տալիս միջին դպրոցում սովորողների հետ կատարվող համապատասխան հոգեբանական աշխատանքի մարտավարության ընտրության համար:

6. Կատարված տեսական և փորձնական հետազոտությունների հիման վրա մշակվել են միջին դպրոցի միջանձնային հարաբերությունների և ուսումնական դրդապատճառների զարգացման ծրագիր և համապատասխան մեթոդական առաջարկներ: Վերջինում հատկապես շեշտադրվում է համակարգային մոտեցումը, որը ենթադրում է անհատական հոգեբանական աշխատանքում բացահայտված օրիաչափությունների հաշվառմամբ թիրախավորված հոգեբանական համալիր միջոցառումներ՝ ուղղված միջանձնային հարա¬բերու-

թյունների և ուսումնական դրդապատճառների՝ ուժեղ կողմերի զարգացմանը և համընթաց անբարենպաստ գործոնների ազդեցության նվազմանը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի կողմից հրատարակած աշխատանքներում:

1.Վարդանյան Լ.Թ, Սարգսյան Վ.Ժ, Հակոբյան Ն.Ռ., Մանկավարժների բարոյահոգեբանական մտահասությունը որպես միջին դպրոցի սովորողների ուսումնական դրդապատճառների զարգացման գործոն, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, 2009, թիվ 3 (6) էջ 159-163:

2. Վարդանյան Լ.Թ., Միջանձնային հարաբերությունների իմացության դերը մանկավարժական գործունեության ընթացքում, «Մանկավարժության կրթության որակի հոգեբանական հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր, Երևան, 2010, էջ 205-208:

3. Վարդանյան Լ.Թ., Մեհրաբյան Մ.Վ., Մեհրաբյան Ա.Ա., Հոգեբանական մանիպուլյացիաները դպրոցում, «Մանկավարժության կրթության որակի հոգեբանական հիմնախնդիրները», գիտաժողովի նյութեր, Երևան, 2010, էջ 154-156:

4. Վարդանյան Լ.Թ., Մեհրաբյան Մ.Վ., Ապագա մանկավարժների ազդեցիկության կոմպետենցիայի զարգացման ուղիները, Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Գիտական հոդվածներ, Վանաձոր, 2011, էջ 67-74:

5. Վարդանյան Լ.Թ., Միջանձնային հարաբերությունների և ուսումնական դրդապատճառների փոխազդեցության հիմնախնդիրները ինտերակտիվ ուսուցման պայմաններում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2013, էջ 194-196:

6. Գևորգյան Ս. Ռ., Վարդանյան Լ.Թ., Ուսուցչի սոցիալ- հոգեբանական կոմպետենտության զարգացումը որպես միջին դպրոցում սովորողների միջանձնային հարաբերությունների շարժընթացը պայմանավորող գործոն, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, 2015 թիվ 3, էջ 82-87:

7. Վարդանյան Լ.Թ., Միջանձնային հարաբերությունների և ուսումնական մոտիվացիայի հարաբերակցության ուսումնասիրությունը անհատական դեպքերի վերլուծության միջոցով, Հոգեբանության արդի հիմնախնդիրները գիտական աշխատանքների ժողովածու, Երևան, 2016, էջ 92-97:

ВАРДАНЯН ЛИЛИТ ТОРГОМОВНА

ДИНАМИКА СООТНОШЕНИЯ МЕЖЛИЧНОСТНЫХ ОТНОШЕНИЙ И УЧЕБНОЙ МОТИВАЦИИ В СРЕДНЕЙ ШКОЛЕ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03 ,,Социальная психология (межличностные отношения, семейная, групповая деятельность)''.

Защита диссертации состоится 26 апреля 2016 года в $13^{.00}$ на заседании специализированного совета психологии и философии 064 ВАК-а по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Меци, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: обусловлена необходимостью преодоления и предотвращения трудностей во взаимоотношениях школьников со сверстниками и учителями, а также использовании межличностных отношений в интересах учебы и превращения в стимулирующие факторы для учебной мотивации.

Обьектом исследования *является соотношение* межличностных отношений и учебной мотивации в средней школе.

Предметом исследования *являются социально-психологиеские факторы эффективного взаимодействия* межличностных отношений и учебной мотивации учеников средней школы.

Цель исследования: выявить социально-психологические факторы динамики соотношения межличностных отношений и учебной мотивации учеников средней школы.

Задачи исследования:

1) проанализировать научные интерпретации понятий “учебная мотивация”, “межличностные отношения”, выделить теоретико-методологические основы исследования;,

2) представить психологические характеристики учебной мотивации и межличностных отношений;

3) выявить и охарактеризовать динамику связей межличностных отношений и учебно-познавательной, социальной мотивации учеников средней школы;

4) исследовать соотношение учебной мотивации и межличностных отношений учеников средней школы с помощью обобщения проблемных ситуаций и кейсов;

5) разработать комплексную программу методических рекомендаций направленную на развитие межличностных отношений и учебной мотивации.

Гипотеза исследования: Особенности межличностных отношений учеников в определенной степени влияют на динамику учебной мотивации учеников средней школы.

1. Доверительные, уважительные отношения учителей и учеников приводят к росту учебной мотивации.
2. Особенности отношения учеников к учебной группе, взаимоотношения учеников влияют на учебную мотивацию и ее виды.
3. Напряженные и конфликтные семейные отношения неблагоприятно влияют на взаимоотношения учеников со сверстниками и с учителями и снижают учебную мотивацию.

Организация и методы исследования. В процессе исследования были использованы методы психологического наблюдения и беседы, методика экспертной оценки компетентности учителей, метод цветовых выборов (Соломин И.), проективная методика “Мой класс” (Анохина Т.), методика “Сказки Дьюса”, “методика оценки отношений подростка с классом”, методика “Лесенка мотивов” (Маркова А., Божович Л.), а также метод анализа кейсов.

Теоретическая значимость исследования. Результаты исследования обогащают теоретические основы проблем межличностных отношений и учебной мотивации, а также научно-теоретические основы эффективной организации учебного процесса средней школы**.**

Практическая значимость исследования. Результаты, полученные экспериментальным путем, могут применяться в процессе выбора эффективной стратегии психологической помощи в средней школе.

Научная новизна исследования. Выявлены социально-психологические факторы, обеспечивающие эффективное взаимодействие межличностных отношений и учебной мотивации учеников средней школы.

Достоверность и надежность исследования вытекают *из научных* ***требований*****,** предъявляемых к психологическим исследованием. Достоверность и обоснованность теоретических и практических результатов обеспечены методологией, изучением теоретических и экспериментальных исследований по проблеме, применением комплекса методик, адекватно поставленным исходным целям исследования, достаточным объемом обследованного контингента.

Работа завершается **общими выводами**.

По теме диссертации **опубликовано 7 статей**.

LILIT T. VARDANYAN

THE CORRELATION DYNAMICS BETWEEN INTERPERSONAL RELATIONSHIP AND LEARNING MOTIVATION AT MIDDLE SCHOOL

Thesis submitted for the Degree of Candidate of Psychological Sciences in *Field of Expertise: 19.00.03 "Social psychology, (Interpersonal relationship, family and group activity)"*

The official defence of the thesis will take place at Higher Attestation Commission's 064 Degree-awarding Scientific Council's session on April 26, 2016, at 13:00 at Khachatur Abovian Armenian State Pedagogical University (Address: 0010 Yerevan, Tigran Mets 17)

SUMMARY

Actual relevance of the research stems from the necessity to overcome and prevent the respective difficulties in schoolchildren's relations with teenagers and teachers. The research area has embraced also the major issues of the use of interpersonal relations to ignite the learning interests considering them as invigorating factors for learning motivation.

The object of the research is the correlation dynamics between interpersonal relationship and learning motivation at middle school.

The subject of the research is social-psychological factors that provide an effective interaction between middle school pupils' interpersonal relationships and learning motivation.

The aim of the research is to explore into the variety of social and psychological factors observed among middle (secondary) school pupils from the perspectives of the dynamics of correlation between the respective interpersonal relationships and learning motivation.

For the fulfillment of the principal aim the following have been put forward**.**

1) to analyse the scientific interpretations of the "interpersonal relationship", "learning motivation" concepts, distinguish theoretical and methodological basisoft he research;

2) to present psychological characteristics of middle (secondary) school pupils' interpersonal relationship and learning motivation;

3) to find out and characterize correlation dynamics between middle (secondary) school pupils' interpersonal relationship and cognitive-social motivation

4) to investigate characterize correlation dynamics between middle (secondary) school pupils' interpersonal relationship and learning motivation; through case study methodology;

5) to develop complex programm of psychological methodological reccomendations for developing interpersonal relationship and learning motivation.

The hypothesis postulated: the features of interpersonal relations affect the middle school pupils' learning motivation dynamics.

The issues set forward contain the following highlights:

1. Confidence, respectful relationships between pupils and teachers lead to the increase of learning motivation.
2. Pupils' interpersonal relationships influence on learning motivation and the variety of its types.
3. Stressful and conflict family relationships leave negative impact on pupils' relationships with teenagers and teachers, reducing, thus, the learning motivation.

Methods of the research include: psychological observation and interview; peer review of teachers' competence, projective methods such as: "My classroom" (Anokhina T.), "Dyes's fairy tales", "Method of colour choice" (Solomin I.); Inventories such as: "Teenagers' classroom relationship assessment method", "Ladder of motives" (Markova A., Bozhovich L.), and the case study method as well.

The theoretical input of the research: The results of the research contribute to the theoretical bases of the subject matter area – the interpersonal relationships and learning motivation – as well as, to the scientific-theoretical basis aimed at the effective organization of educational processes at middle (secondary) school level.

The practical contribution of the research: The results of empirical research might be implemented in strategy development for psychological assistance, guidance and support at middle school.

The innovative approaches and actual novelty of the research: The research comprises systemized insights into the paradigm of pertinent socio-psychological factors that provide an effective interaction between middle school pupils' interpersonal relationships and learning motivation.

The reliability and validity of theoretical and practical findings are provided by the relevant research methodology, as well as by investigations of theoretical and experimental researches conducted on the theme under question, using complexity of methods, adequately formulated objectives and sufficient sampling.

The variety of aspects covered in the research has been submitted to the public discussion through **seven articles** published prior to the public defence of the thesis.